Ն. ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Ձեռագրատան վարիչ

ՅՈՒՅԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

Ն° 708
ԵԱՐԱԿՆՈՑ

ԹԵՐԹԵՐԸ՝ 306: - ՊՐԱԿՆԵՐ՝ չունի: Թղթերը միացված են արհեստական միջոցով: - ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 29.8×21.2×1.7 սմ: - ՆՅՈՒԹԸ՝ մաքուր սպիտակ թուղթ: - ԿԱԶՄԸ՝ բարակ կապույտ ստվարաթուղթ: - ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐԸ՝ սկզբում կա մաքուր սպիտակ մի թուղթ: - ՎԻՃԱԿԸ՝ լավ: - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միապուն: - ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ բոլոր թերթերի թիկունքի մասը դատարկ է: - ՏՈՂԵՐԸ՝ 12: - ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ թուղթն ինքնին գծավոր է /նոտայի հինգ գծանի թուղթ/: - ԳԻՐԸ՝ շեղագիր և եվրոպական նոր նոտաներ: - ՁԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ չունի: - ԳՐԻՉԸ՝ Մասիս վրդ. Գալստյան: - ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Լորիս Ճգնավորյան /Լոնդոն/: - ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1976 թ.: - ՎԱՅՐԸ՝ Մանչեստր /Անգլիա/: - ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ մատյանը Լոնդոնից Ս. Էջմիածին է բերվել 1977 թ., ապա Վեհափառ Հայրապետը 1983 թ. Հոկտեմբերի 13-ին այն հանձնեց Մայր Աթոռի Ձեռագրատուն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

/Մատյանն ամբողջությամբ լուսապատկերն է բնագիր ձեռագրի:/

Թ. 1ա -Եղիա Մ. Տնտեսեան

Շարական Ձայնագրեալ

Իսթանպոլ

Գրաձուլարան և գրաշարատուն: Յակոբ Տերունեան

"MERKEZ" Matbaasi

1934:

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1996 թվականի թիվ թիվ Է-Ը-ից

Թ. 2ա - Կանոն Աստուածայայտնութեան Ճրագալուցին:
Թ. 11ա - Կանոն Աստուածայայտնութեան Ա. Աւուր:
Թ. 28ա - Կանոն երրորդ Աւուր Ս. Ծննդեան:
Թ. 45ա - Կանոն Ե Աւուր Ս. Ծննդեան:
Թ. 53ա - Կանոն Զ Աւուր Ս. Ծննդեան:
Թ. 60ա - Կանոն Է Աւուր Ս. Ծննդեան:
Թ. 67ա - Կանոն Ը Աւուր Ս. Ծննդեան:
Թ. 78ա - Կանոն Տեառնընդառաջի:
Թ. 87ա - Կանոն Դաւթի Մարգարէին և Յակոբայ Առաքելոյն:
Թ. 94ա - Կանոն Ս. Մտեփանոսի Նախավկային:
Թ. 104ա - Գլխաւոր Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի:
Թ. 109ա - Կանոն Սրբոց Որդւոցն Յակոբայ և Յովհաննու Առաքելոց:
Թ. 115ա - Կանոն հաւօրէն Առաքելոց:
Թ. 125ա - Կանոն Եօթանասուներկու Աշակերտացն Քրիստոսի:
Թ. 130ա - Կանոն բուն Բարեկենդանին:
Թ. 137ա - Հարցք Ապաշխարութեան Առաջին Շաբաթու Աղուհացիցն:
Թ. 159ա - Հարցք Ապաշխարութեան Երկրորդ Շաբաթու Աղուհացիցն:
Թ. 178ա - Կանոն Երրորդ Կիւրակէին Աղուհացից:
Թ. 198ա - Հարցք Ապաշխարութեան ԲԿ:
Թ. 219ա - Կանոն Չորրորդ Կիւրակէի Աղուհացից:
Թ. 228ա - Հարցք Ապաշխարութեան ԳԶ:
Թ. 244ա - Հարցք Ապաշխարութեան ԳԿ:
Թ. 250ա - Կանոն հինգերորդ Կիւրակէի Աղուհացից:
Թ. 259ա - Հարցք Ապաշխարութեան ԴԶ:
Թ. 276ա - Կանոն վեցերորդ Կիւրակէի Աղուհացից:
Թ. 282ա - Հարցք Ապաշխարութեան ԴԿ:
Թ. 297ա - Կանոն Յարութեան Ղազարու:
Թ. 303ա - Կանոն Ծաղկազարդի Կիւրակէին:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

/Կազմի առաջին երեսին գրված է/

Տնտեսեան
Զայնագրեալ Շարականք
I :

/Սկզբի պահպանակի թիկունքին գրված է/

Նէր Նորին Սուրբ Օծութիւն
Տ. Տ. Վազգէն Ա
Կաթողիկոս Ամենայն Հայոց.
Խորին երախտագիտութեամբ,
Լ. Զ. Ճգնաւորեան:
հուն. 7 /19/77:

Nº 709

ՇԱՐԱԿՆՈՑ

ԹԵՐԹԵՐԸ՝ 296: - ՊՐԱԿՆԵՐ՝ չունի: Թղթերը միացված են արհեստական միջոցով: - ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 29.9×21×2.8 սմ: - ՆՅՈՒԹԸ՝ մաքուր սպիտակ թուղթ: - ԿԱԶՄԸ՝ բարակ կապույտ ստվարաթուղթ: - ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ չունի: - ՎԻՃԱԿԸ՝ լավ: - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միասյուն: - ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ բոլոր թերթերի թիկունքի մասը դատարկ է: - ՏՈՂԵՐԸ՝ 12: - ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ թուղթն ինքնին գծավոր է /նոտայի հինգ գծանի թուղթ/: - ԳԻՐԸ՝ շեղագիր և եվրոպական նոր նոտաներ: - ՁԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ չունի: - ԳՐԻՉԸ՝ Մասիս վրդ. Գալստյան: - ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Լորիս Ճգնավորյան /Լոնդոն/: - ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1976 թ.: - ՎԱՅՐԸ՝ Մանչեստր /Անգլիա/: - ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ մատյանը Լոնդոնից Ս. Էջմիածին է բերվել 1977 թ., ապա Վեհափառ Հայրապետը 1983 թ. Հոկտեմբերի 13-ին այն հանձնեց Մայր Աթոռի Ձեռագրատուն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

/Մատյանն ամբողջությամբ լուսապատկերն է բնագիր ձեռագրի:/

Թ. 6ա - Շարականք նոյն Ծաղկազարդի Կիւրակէին ԴԶ:
Թ. 9ա - Կանոն Մեծի Երկուշաբթին:
Թ. 17ա - Կանոն Մեծի Երեքշաբթին:
Թ. 30ա - Կանոն Մեծի Հինգշաբթին:
Թ. 41ա - Կանոն Մեծի Ուրբաթու:
Թ. 52ա - Կանոն Մեծի Շաբաթուն թաղմանն Տեառն:
Թ. 60ա - Կանոն Սրբոյ Զատկին:
Թ. 68ա - Հարցք Յարութեան - կարգաւ ըստ ութն ձայնից:
Թ. 84ա - Կանոն գլխատման Յովհաննու Մկրտչին:
Թ. 87ա - Կանոն Նոր Կիւրակէին:
Թ. 117ա - Կանոն Աշխարհամատրան Կիւրակէին:
Թ. 246ա - Կանոն Համբարձման Քրիստոսի:
Թ. 254ա - Կանոն Երկրորդ Ծաղկազարդին:
Թ. 259ա - Կանոն Պէնտեկոստէին Առաջին աւուր:
Թ. 268ա - Կանոն Երկրորդ աւուր:
Թ. 273ա - Կանոն Երրորդ աւուր:
Թ. 279ա - Կանոն Չորրորդ աւուր:
Թ. 284ա - Կանոն Հինգերորդ աւուր:
Թ. 289ա - Կանոն Վեցերորդ աւուր:
Թ. 294ա - Կանոն Եօթներորդ աւուր:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

/Կազմի առաջին երեսին գրված է/

Տնտեսեան

Ձայնագրեալ Շարականք

II :

N° 710
ՇԱՐԱԿՆՈՑ

ԹԵՐԹԵՐԸ՝ 400: - ՊՐԱԿՆԵՐ՝ չունի: Թղթերը միացված են արհեստական միջոցով: - ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 29.8×21×4 սմ: - ՆՅՈՒԹԸ՝ մաքուր սպիտակ թուղթ: - ԿԱԶՄԸ՝ բարակ կապույտ ստվարաթուղթ: - ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ չունի: - ՎԻՃԱԿԸ՝ լավ: - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միասյուն: - ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ բոլոր թերթերի թիկունքի մասը դատարկ է: - ՏՈՂԵՐԸ՝ 12: - ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ թուղթն ինքնին գծավոր է /նոտայի հինգ գծանի թուղթ/: - ԳԻՐԸ՝ շեղագիր և եվրոպական նոր նոտաներ: - ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ չունի: - ԳՐԻՉԸ՝ Մասիս վրդ. Գալստյան: - ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Լորիս Ճգնավորյան /Լոնդոն/: - ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1976 թ.: - ՎԱՅՐԸ՝ Մանչեստր /Անգլիա/: - ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ մատյանը Լոնդոնից Ս. Էջմիածին է բերվել 1977 թ., ապա Վեհափառ Հայրապետը 1983 թ. Հոկտեմբերի 13-ին այն հանձնեց Մայր Աթոռի Ձեռագրատուն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

/Մատյանն ամբողջությամբ լուսապատկերն է բնագիր ձեռագրի:/

Թ. 5ա - Աւագ Օրհնութիւնք Յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:
Թ. 70ա - Կանոն Սրբոյ Տապանակին:
Թ. 83ա - Կանոն Վարդավառի Երկրորդ Աւուրն:
Թ. 92ա - Կանոն Շողակաթին:
Թ. 97ա - Կանոն Վերափոխման Սուրբ Աստուածածնի Առաջին Աւուրն:
Թ. 105ա - Կանոն Վերափոխման Սուրբ Աստուածածնի Երկրորդի Աւուրն:
Թ. 110ա - Կանոն Վերափոխման Սուրբ Աստուածածնի Երրորդի Աւուրն:
Թ. 117ա - Կանոն Նաւակատեաց Սրբոյ Խաչին:
Թ. 122ա - Կանոն Վերացման Սրբոյ Խաչին:
Թ. 128ա - Կանոն Երկուշաբթի Աւուրն:
Թ. 133ա - Կանոն Երեքշաբթի Աւուրն:
Թ. 138ա - Կանոն Չորեքշաբթի Աւուրն:
Թ. 143ա - Կանոն Հինգշաբթի Աւուրն:
Թ. 147ա - Կանոն Ուրբաթի Աւուրն:
Թ. 152ա - Կանոն Շաբաթու Աւուրն:
Թ. 158ա - Կանոն Վարագայ Խաչին:
Թ. 164ա - Կանոն Գիւտի Սուրբ Խաչին:
Թ. 170ա - Կանոն Ծննդեան Ս. Աստուածածնի ի Յովակիմայ և յԱննայէ:
Թ. 175ա - Կանոն Յովակիմայ և Աննայի:
Թ. 182ա - Կանոն Աւետեաց Ս. Աստուածածնին:
Թ. 189ա - Կանոն Ծննդեան Յովհաննու Մկրտչին:
Թ. 194ա - Այլ կանոն Յովհաննու Մկրտչին:

Թ. 200ա -Կանոն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մտանելոյն ի վիրապն:
Թ. 205ա -Կանոն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին ելանելոյն ի վիրապէն:
Թ. 212ա -Կանոն Սրբոց Մարգարէից:
Թ. 216ա -Այլ հարց Սրբոց Մարգարէից ԱՁ:
Թ. 218ա -Կանոն Սրբոց Թարգմանչաց /նաև Թ. 220ա/:
Թ. 225ա -Կանոն Սրբոյն Յակոբայ Մծբնայ Հայրապետին:
Թ. 231ա -Կանոն Սրբոց Հրեշտակապետաց:
Թ. 236ա -Կանոն Սրբոց Հայրապետաց:
Թ. 247ա -Շարական Սրբոց Վարդանանց:
Թ. 252ա -Կանոն համօրէն Մարտիրոսաց:
Թ. 313ա -Կանոն համօրէն Ննջեցելոց:
Թ. 340ա -Ստեղի առաքելոցն Պետրոսի և Պօղոսի:
Թ. 343ա -Ստեղի Որդւոցն Որոտման:
Թ. 344ա -Ստեղի Առաքելոց:
Թ. 346ա -Կանոն Յովնանու Մարգարէին:
Թ. 352ա -Ստեղի Քառասնից Մանկանց /նաև Թ. 354ա/:
Թ. 356ա -Ստեղի վերջին Ուրբաթու Մեծ Պահոց:
Թ. 363ա -Ստեղի Յարութեան Ղազարու:
Ստեղի Աւագ Ուրբաթու:
Թ. 364ա -Ստեղի Աւագ Շաբաթու:
Թ. 365ա -Ստեղի Վարդավառի Առաջին Աւուրն:
Թ. 369ա -Ստեղի Վարդավառի Երկրորդ Աւուրն:
Թ. 370ա -Ստեղի Վարդավառի Երրորդ Աւուրն:
Թ. 371ա -Ստեղի Հրեշտակապետաց:
Թ. 374ա -Շարական Հովհաննու Ոսկեբերանի:
Թ. 376ա -Շարական Սրբոց Վարդանանց:
Թ. 377ա -Մանկունք Խաչի Ութերորդ Աւուր:
Թ. 379ա -Շարական Սրբոյն Բարս/ե/ղի Հայրապետին:
Թ. 381ա -Շարական Նիկողայոսի Հայրապետին:
Թ. 382ա -Շարական Մանկանցն Բեթղեհեմի:
Թ. 383ա -Երգ Արևագալի:
Թ. 384ա -Երգ վկնի «Աղաղակեցէք» Սաղմոսին:
Թ. 385ա -Երգ վկնի «Աստուած Աստուած իմ» Սաղմոսին:
Թ. 386ա -Երգ վկնի «Տէր հովուեսցէ» Սաղմոսին:
Թ. 387ա -Կանոն Սրբոց Հռիփսիմեանց:
Թ. 389ա -Շարական Սրբուհւոյն Սանդիտոյ:
Թ. 390ա -Կանոն Անտոնի Անապատականին:
Թ. 393ա -Քարոզ Զրօրինեաց:
Տաղ Զրօրինեաց /նաև Թ. 395ա/:
Թ. 396ա -Տաղ Տեառնընդառաջի:
Թ. 397ա -Քարոզ Ոտնալուայի:
Թ. 398ա -Գանձ Ոտնալուայի:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

/Կապմի առաջին երեսին գրված է/
Տնտեսեան
Ձայնագրեալ Շարականք
III :

№ 711
ԿՈՆԴԱԿ

ԹԵՐԹԵՐԸ՝ 1: - ՄԵՇՈՒԹՅՈՒՆԸ՝ 61.7×30.3 սմ: - ՆՅՈՒԹԸ՝ դեղնավուն բարակ ստվարաթուղթ: - ԿԱԶՄ՝ չունի: - ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ չունի: - ՎԻՃԱԿԸ՝ լավ: - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միասյուն: - ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ թիկունքի էջը : - ՏՈՂԵՐԸ՝ 29: - ԳՇՈՒՄՆԵՐԸ՝ մատիտով է գծված: - ԳԻՐԸ՝ նոտրգիր: - ՁԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ կոնդակն ունի գունավոր վեց թռչնագրեր և մեկ կարդագիր: /Կոնդակի վերևի տպագիր մասում կան կարդագրեր, Հայրապետական թագ, գավազան, խաչ և երկու դրոշներ, Ս. Էջմիածնի տաճարը, որը գտնվում է երկու Մասիսների մեջտեղում, աղավնակերպ Ս. Հոգին, խաչ, երկու ծառեր, երկու արագիլներ և կարդանկարներ: Ներքևի մասում տպված են երկու թռչուններ և ծաղիկների երկու ճյուղեր: Կոնդակի երկու կողքերին, աջ ու ձախ լուսանցքներով, կան երկու գեղեցիկ լուսանցապարդեր: Այս բոլորի ծաղկողն է անվանի արվեստագետ-նկարիչ Հակոբ Կոջոյանը, 1883-1959 թթ./: - ԳՐԻՉԸ ԵՎ ԾԱՂԿՈՂԸ՝ Ալբերտ Կարագյան: - ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս: - ԺԱՄԱՆԱԿԸ՝ 5 Դեկտեմբերի 1980 թ.: - ՎԱՅՐԸ՝ Երևան: - ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ կոնդակը ժամանակին ուղարկվել է Լոս Անջելոս /ԱՄՆ/, սակայն փոփոխության համար հետագայում ետ՝ Մայր Աթոռ է ուղարկվել:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

/Կոնդակի վերևի մասում գրված է :/
Մեծայարգ Տիար Սարգիս Սիմոնեանին
Հարազատ որդւոյ Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի
Ողջոյն Հայրական և օրհնութիւն Հայրապետական
Լոս Անճէլոս:

/Կոնդակը տրվել է Սարգիս Սիմոնյանին «Ս. Ներսէս Շնորհալի» շքանշանով պարգևատրման համար:/

Nº 712

Կ Ո Ն Դ Ա Կ

ԹԵՐԹԵՐԸ՝ 1: - ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 61.7×30.3 սմ: - ՆՅՈՒԹԸ՝ դեղնավուն բարակ ստվարաթուղթ: - ԿԱԶՄ՝ չունի: - ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ չունի: - ՎԻՃԱԿԸ՝ լավ: - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միապուն: - ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ թիկունքի էջը : - ՏՈՂԵՐԸ՝ 30: - ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ մատիտով է գծված: - ԳԻՐԸ՝ նոտրգիր: - ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ կոնդակն ունի յոթ թոչնագրեր և մեկ վարդագիր: /Արվեստագետ Հակոբ Կոջոյանի նկարած նույն կոնդակի թուղթն է սա ևս/: - ԳՐԻՉԸ ԵՎ ԾԱՂԿՈՂԸ՝ Այբերտ Կարագյան: - ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս: - ԺԱՄԱՆԱԿԸ՝ 6 Դեկտեմբերի 1980 թ.: - ՎԱՅՐԸ՝ Երևան: - ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ կոնդակը ժամանակին ուղարկվել է Լոս Անջելոս /ԱՄՆ/, սակայն փոփոխության համար հետագայում ետ՝ Մայր Աթոռ է ուղարկվել:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

/Կոնդակի վերևի մասում գրված է/
Մեծայարգ Տիար Բաղբրթ Սիմոնեանին
Հարազատ որդւոյ Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի
Ողջոյն Հայրական և օրհնութիւն Հայրապետական
Լոս Անճէլոս:
/Ր. Սիմոնյանին ուղղված օրհնության կոնդակ է սա:/

Nº 713

Վ Ի Ճ Ա Կ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

ԹԵՐԹԵՐԸ՝ 40: - ՊՐԱԿՆԵՐ՝ չունի: Թղթերը միացված են արհեստական միջոցով: - ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 35.8×43.3×0.3 սմ: - ՆՅՈՒԹԸ՝ դեղնավուն սովորական բարակ թուղթ: - ԿԱԶՄԸ՝ դեղին հասարակ թուղթ: - ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ չունի: - ՎԻՃԱԿԸ՝ բավարար: - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ 74 սյունակի վրա: - ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ 1թ, 2ա, 40թ: - ՏՈՂԵՐԸ՝ փոփոխական՝ 30-35: - ԳԾՈՒՄՆԵՐ՝ չունի: - ԳԻՐԸ՝ շեղագիր: - ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ չունի: - ԳՐԻՉԸ՝ անհայտ: - ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Հայաստանի կենտրոնական վիճակագրական վարչության գյուղատնտեսական վիճակագրության սեկտոր: - ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1990 թ.: - ՎԱՅՐԸ՝ Երևան: - ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ մատյանը ստացվել է 1993 թ. Ալեք և Մարի Մանուկյան Գանձատնից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

/Կակմի վրայի գրությունը տպագիր է/

Հ. Ս. խ. Հ. Կենտրոնական վիճակագրական վարչություն
Հայաստանի
Բնակավայրերի համառոտ բնութագիրը
ըստ գյուղխորհուրդների 1929 թվի համատարած հաշվառման
տվյալների
1930 թ.
Հրատարակություն Հ. Ս. խ. Հ. Ժողկոմխորհի:
/Թ. 1ա տպագիր է: Այստեղ տրված է «Նախաբան»-ը:/
/Մատյանի թթ. 2բ-40ա մասը գրված է ձեռագրով: Մատյանն ամբողջությամբ լուսապատկերն է բնագիր ձեռագրի:/

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա -/կպցված տպագիր մի փոքրիկ թղթի վրա գրված է հետևյալը/

Նուէր
Մայր Աթոռ Ս. Էջմիածնին
Յակոբ Ս. Անասեանից
Երևան - 978 թ.:

N° 714
ԴԱՐԱՊԱՏՈՒՄ

ԹԵՐԹԵՐԸ՝ 121: - ՊՐԱԿՆԵՐ՝ չունի: Անջատ թղթեր են, որոնք կապված են: - ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 28.3×22.1×2 սմ: - ՆՅՈՒԹԸ՝ մաքուր բարակ սպիտակ թուղթ: - ԿԱԶՄԸ՝ նոնագույն թավշապատ հաստ ստվարաթուղթ: - ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐԸ՝ սկզբում և վերջում մեկական վարդագույն թուղթ: - ՎԻՃԱԿԸ՝ լավ: - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միասյուն: - ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ 1ա, 97ա, 99ա, 101ա, 107ա, 109ա, 116ա և բոլոր թերթերի թիկունքի մասը դատարկ է: - ՏՈՂԵՐԸ՝ փոփոխական՝ 2-29: - ԳՇՈՒՄՆԵՐ՝ չունի: - ԳԻՐԸ՝ շեղագիր: - ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ամբողջ էջի ծավալով կա մի ջրաներկ պատկեր, որ ներկայացնում է Հայաստանը, Արաքս գետի երկու ափերում: Երկու Մասիսների միջից ծագում է Արեգակը, որի վերևում թևատարած մի արագիլ է թռչում, իսկ ներքևում Արաքս գետն է հոսում: Գործածված են մի քանի գույներ: Բացի այդ, մատյանում նկարված են մուգ մանուշակագույն թանաքով Ստամբուլի և Թուրքիայի ներքին գավառների մի շարք հայկական վանքերի, տաճարների, գավիթների և գանձատների բանալիների նկարները, իրենց բնական մեծությամբ: Կան ընդամենը 54 բանալիների նկարներ: - ԳՐԻՉԸ ԵՎ ՇԱՂԿՈՂԸ՝ Շավարշ քահանա Պալրմյան: - ԺԱՄԱՆԱԿԸ՝ 5 Հուլիս 1976 թ.: - ՎԱՅՐԸ՝ Ստամբուլ /Թուրքիա/: - ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ Մատյանը 1976 թ. Ստամբուլից նվեր է ուղարկվել Մայր Աթոռին: Ձեռագրատունն այն ստացել է 1983 թ. նոյեմբերի 24-ին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սույն մատյանը պարունակում է Ստամբուլի և Թուրքիայի ներքին գավառներում գտնվող մի շարք տաճարների, վանքերի, գավիթների և գանձատների բանալիների նկարներ, ինչպես նաև այդ սրբատեղիների և պատմական վայրերի մասին արժեքավոր տեղեկություններ, այսպես, օրինակի համար, տաճարի անունը, ո՞ր քաղաքում և թաղամասում է գտնվում, արդյոք վարժարան, գերեզմանատուն կամ դարմանատուն ունի՞, թե ոչ: Մատյանում տրվում են նաև շատ արժեքավոր հիշատակարաններ, որոնք ունեն պատմական նշանակություն:

Ձեռագրի տեքստը մեծ մասամբ մեքենագրված է, սակայն քանի որ ունի մի քանի էջ ձեռագիր գրություն /թթ. 74ա, 74բ և վերջում՝ պահպանակի վրա/, իսկ բոլոր նկարները հեղինակի ձեռքի գործերն են, հարմար գտնվեց մատյանը կետեղել Ձեռագրատանը, իր ունեցած պատմական արժեքի համար:

Թ. 2ա - /մեքենագրված/

Դարապատում
Շաւարշ Քհնյ. Պալըմեան
1976
Իսթանպուլ

Թ. 4ա - /մեքենագրված/

Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա Ծայրագոյն Պատրիարք և
Կաթողիկոս Ամենայն Հայոց
ի Սբ. Էջմիածին

Վեհափառ Տէր,

*Իմաստով ու արժէքով նշանակելի այս աշխատութիւնս, 1962-ին Անատոլուի գաւառները հովուական այցելութեանս ընթացքին, Սբ. **Յակոբ Մծբնայ** Հայրապետին գերեզմանը ուխտի գացած օրս, անկէ յիշատակ մը ըլլալով տաճարին բանալին իր բնական մեծութիւնովն ու ձևովը ընդօ/րինա/կեցի:*

Եւ ապա տասն և չորս տարիներ շարունակ հալածանքներու, կրպարտութիւններու ու ծաղրանքներու նշաւակ դառնալով, այնքանը հավաքելու յաջողեցայ: Բոլոր բանալիները իրենց բնական մեծութիւնովն ու ձևերովը ընդօրինակուած են:

*Այս ձեռնարկը **Հայաստանեայց** եկեղեցիներուն բանալիներուն և յիշատակարաններուն հաւաքածոյ **Էջմիածնայ** մէջ միաւորելու առաջադրանքով և յառաջիկայ աւելի ընդարձակ ծրագրի մը նախապատրաստական նախախայրիքը, 1976-ի **Միւռոնօրհնութեան** որպէս յուշանուէր, նախ Հայ արուեստի նվոյշներ և ապա **Հայաստանեայց** եկեղեցիներու բանալիներն ու յիշատակարանները իրենց հովուապետին որդիական ծառայութեան փունջը կը մատուցանեմ:*

Որդիական կարօտով ու հաւատարմութեամբ մատչիմ ի համբոյր
*Ձերդ **Ս. Աջոյն***

Մնաս խոնարհ ծառայ Ձերդ
Շաւարշ քինյ. Պալըմեան
/ստորագրություն/

/Ստամբուլից բացի մատյանում գրված է Մծբին /Նյուսեյբին/, Սիս /Գոլյան/, Աղանա /Անավարզա բերդ/, Տիգրանակերտ, Մարտին, Խարբերդ, Էլազըղ /Շահին Գայա/, Մալաթիա, Իսկենդերուն, Տարսոն /Թարսուս/, Մուշ /Տարոն/ և Սեբաստիա բնակավայրերում գտնվող փակված կամ ավերված սրբատեղիների մասին:/

Թ. 114ա -Սահմանադրութեան Երեսփոխանական առաջին ընտրութեան մասին վաւերագիր մը /19 Օգոստոս 1863 թ./: /մեքենագրված/:

Թ. 74ա - /ձեռագիր/

1976

Արդիական բանալիներու ներկայ կատարելագործած Եւրոպական տիպի ձևն ու կերպը:

Արդիական բանալիներու Նախապապը:

Այս բանալին 1676-ին կառուցուած Իւսկիւտարի Ս. Խաչ եկեղեցւոյ Գանձատան առաջին դրան բանալին է: Այս պարագան անուրանալի փաստ մըն է, որ հայ վարպետնե/ր/ը երեք հարիւր տարիներ առաջ արդէն յղացեր ու կատարելագործեր են այսօր/ու/ան բանալիներու ձևը: Ասոր նախնական մէկ /թ. 74բ/ ձևը, որուն նմոյշը այս գիրքս կապմել տալէ վերջ ձեռքս հասաւ, որուն նկարը 117դ յաւելեալ էջին վրայ կը տեսնուի, որմէ կարելի է գուշակել, թէ հայ վարպետներու հանճարը միշտ յառաջդիմելու ու ստեղծագործելու ատակ եղած են:

ԹԹ. 94ա և 95ա- /Տիգրանակերտի Ս. Կիրակոս եկեղեցում կա մի քար, փակ գրերով գրված, որ հեղինակը սույն մատյանի այսպես է վերծանել/

Թ. 94ա -Թ քար - Սղագիր արձանագրութիւն:

Թ. 95ա - «Մահտեսի Կարապետ Վարդապետ Միրկա, քաղաք Տիգրանակերտ, վարպետ Յակոբ»:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 3ա - /մեքենագրված/

Պատրաստեց
Շաւարշ Քինյ. Պալըմեան
Իսթանպուլ
1976

/Մատյանի վերջում գտնվող պահպանակի վրա ձեռագիր գրված է հետևյալը./

Պատմական նշանակութիւն ունեցող
խոստովանութիւն մը

Երբ այս գիրքս նոր կապմել տուեր էի, Կ. Փաշայի Ս. Յովհաննէս Սուետարանիչ եկեղեցւոյ խորհրդարանը՝ 3 Յուլիս 1976 Շաբաթ օրը ժամը 2-ին յուղարկաւորութեան մը առիթով հաւաքուած հոգևոր

եղբայրներուս ցոյց տուի, այն համոզումով, թէ անոնք ալ պիտի ուրախանան այսպիսի նոր յղացումի մը արդիւնքէն:

Միայն Հոգշ. Տ. Խաժակ վրդ. Պարսամեանը գնահատեց և վիս շնորհաւորեց...

/ստորագրություն/

Շաւարշ Քհնյ. Պալըմեան

5-7-1976
Մ. գիւղ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

/Մատյանի սկզբի պահպանակի թիկունքին գրված է/
Կպվարար
Գէորգ Թուշուճեանի
Որդիական նուէրը
«Գորայ» կպվատուն
Իսթանպուլ:

N° 715

ԺԱՄԱԳԻՐՔ

ԹԵՐԹԵՐԸ՝ 134: - ՊՐԱԿՆԵՐԸ՝ սկզբում ձեռագիրն ունեցել է 19 պրակից ավելի /տեսնել Թ. 108ա ԺԹ պրակը/, իսկ այժմ պակասում է ձեռագրի գրեթե կեսը: - ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 24×21×3.3 սմ: - ՆՅՈՒԹԸ՝ թուղթ: - ԿԱԶՄԸ՝ կապույտ լիտերինով ծածկված հաստ ստվարաթղթյա տուփ, որի չափերն են՝ 26.3×24.5×8.5 սմ: - ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ չունի: - ՎԻՃԱԿԸ՝ շատ վատ, տեղ-տեղ վառված և քայքայված: Պակասում են բազմաթիվ թերթեր՝ սկզբից, միջից և վերջից: Պակասում են մի շարք ամբողջական պրակներ: Եղածներն էլ ետ-առաջ են կարված: Ձեռագրի գրեթե կեսը թափված է: - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ երկսյուն: - ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐ՝ չկան: - ՏՈՂԵՐԸ՝ 24: - ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ ճնշումով: - ԳԻՐԸ՝ բոլորգիր: - ՁԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ մատյանն ունի գեղեցիկ լուսանցապարդեր, թոչնագրեր /20ա/, թոչուններ, գլխապարդեր /11բ, 47ա, 61բ, 71ա, 81բ, 90ա և 101ա/ և մեկ խորան /20ա/: Գործածված են միայն կապույտ և կարմիր գույները: - ԳՐԻՉԸ՝ անհայտ: - ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Սափոր - ԾԱՂԿՈՂԸ՝ անհայտ - ԺԱՄԱՆԱԿԸ՝ 16-17-րդ դդ.: - ՎԱՅՐԸ՝ անհայտ, սակայն հավանաբար Իրան: - ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ մատյանը պատկանել է Արշամ ավագ քահանա Մկրտչյանի մեծ հորը, որ նվիրել է Սպահանի շրջանի Խոկան գյուղի «Ծաղիկ Ավետարան» եկեղեցուն: Տ. Արշամ քահանայի թոռը՝ Իսկուհի Տեր-Մկրտչյանը, 1975 թ. Իրանից ներգաղթել է հայրենիք և բնակություն հաստատել Լենինականում՝ հետը բերելով սույն ձեռագիրը: 1983 թ. Դեկտեմբերի 1-ին այն նվիրել է Մայր Աթոռի Ձեռագրատանը, Շիրակի թեմի առաջնորդ Տ. Նարեկ Եպիսկոպոս Շաքարյանի ձեռամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

/Ձեռագրում պահպանվող մի ծրարում գտնվում են բազմաթիվ մեծ ու փոքր պատառիկներ, որոնք դուրս են եկել մատյանից: Ձեռագիրը մասնակի նորոգության է ենթարկվել 1983 թ. Դեկտեմբերին Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում:/

Ձեռագիրը պարունակում է բազմաթիվ սաղմոսներ, աղոթքներ և ժամագրքի կանոնական մասեր:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 90ա -Արդ լ29ք գստաց/ո/ղ Սբ տառիս գբարեսէր Սափորն, և գծնօղսն իւր ..... և գորդիսն իւր .....:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 84բ -ա բ գ դ ե գ է ը թ /գրչափորձ/:
Թ. 102բ -և Սկնուայ:

N° 716
ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏԱՐԱԳԻ

ԹԵՐԹԵՐԸ՝ 19: - ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 28.3×20.6×1.3 սմ: - ՆՅՈՒԹԸ՝ դիմացկուն հաստ թուղթ: - ԿԱԶՄԸ՝ ծաղկավոր թղթով ծածկված հաստ ստվարաթուղթ: - ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐԸ՝ սկզբում չորս /մեկը դեղին/ և վերջում մեկ մաքուր սպիտակ թուղթ: Այս թղթերը գործարանային հատուկ պատրաստություն ունեն: Երկուսի վրա ճնշումով գծված է 7.5 սմ տրամագծով մի շրջանակ, որի մեջ կան տերևներով զարդարված երկու ճյուղեր, արքայական թագ և վրան մի արծիվ: Կենտրոնում գրված է մեծատառ P և V լատիներեն տառերը: Իսկ մյուս երկու թղթերի վրա ճնշումով գրված է, որ երեքդարյա այս գիրքը կազմվել է 1829 թվականից հետո: - ՎԻՃԱԿԸ՝ բավարար, սակայն տեղ-տեղ ցեցակեր և ծակված: - ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ երկսյուն: - ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐ՝ չունի: - ՏՈՂԵՐԸ՝ 23: - ԳԾՈՒՄՆԵՐ՝ չունի: - ԳԻՐԸ՝ տպագիր բոլորգիր: - ԳՐԻՉԸ՝ անհայտ: - ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Գասպար: - ԾԱՂԿՈՂԸ՝ անհայտ: - ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1686 թ.: - ՎԱՅՐԸ՝ Վենետիկ /Իտալիա/: - ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ մատյանը 1953 թ. Ս. Էջմիածնի Մայր Տաճարին է նվիրվել Բուխարեստից Տ. Իգնատիոս ավագ քահանա Քիլիվլիյանի կողմից: Տարիներ շարունակ այն պահված է եղել Ս. Էմիածնի Վեհարանում, ապա Ալեք և Մարի Մանուկյան Գանձատանը: 1983 թ. Դեկտեմբերի 14-ին Գանձատան վարիչն այն հանձնեց Մայր Աթոռի Ձեռագրատուն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ամբողջ մատյանը տպագիր է: Տպագրված է Վենետիկում Զուղայեցի Խոճա Սահրատենց տան Շահրիմանյանի տպարանում: Սակայն մատյանի բոլոր էջերն անխտիր հետագայում ձեռքով ծաղկապարդված են շատ գեղեցիկ մանրանկարներով և պարդանկարչությամբ, որի համար սույն մատյանը պահվում է Ձեռագրատանը: Տպագիր մատյանն սկզբում ունեցել է տպագիր բազմաթիվ նկարներ, որոնք հետագայում ծաղկողը ջրաներկով գունավորել է գիրքը: Մատյանի անվանաթերթը /Թ. 1ա/ և գլխապարդը /Թ. 2ա/ գեղեցիկ նմուշներ են հայկական պարդանկարչության: Բացի այդ կան նաև բազմաթիվ գեղեցիկ մեծ ու փոքր լուսանցապարդեր, մարդագրեր /1բ, 2ա, 8ա/, երկգլխանի մարդագրեր /4ա, 5ա, 12բ/, գազանագրեր /1բ/, սատանայագրեր /8ա, 16բ/, միացյալ մարդագիր և թռչնագիր /2բ/, միացյալ մարդագիր և ծաղկագիր /10բ/, միացյալ մարդագիր և վիշապագիր /19ա/ և միացյալ թռչնագիր և ձկնագիր /19բ/:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Վերապարդանկարված այս գրքի հիշատակարանը տես «Հայ գիրքը 1512-1800 թվականներին» մատենագիտությունում, Երևան, 1988, էջ 96:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

/Սկզբում գտնվող երկրորդ պահպանակի թիկունքին գրված է/

Կը նուիրէ Խորհրդատե/տ/ու այս Ս. Էջմիածնի Մայր տաճարին՝ Իգնատիոս Աւագ Քհն. Քիլիմլիեան. աւագերեց Պուքրէշի Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյն:

1953

Ռումանիա

(Շարունակելի)